

## ՊԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Գաղութիս զառակներէն եւ նախկին հնդկահայ՝ Տիար Մալքոմ Սուքիաս, 1998 տարուայ հոկտեմբեր ամսուայ կէտերուն, հեռաձայնով մեզի կը յայտնէր թէ, Սիւնիի մէջ տեղի ունեցած աճուրդի մը ընթացքին հայկական հնութիւն ունեցող երկու եկեղեցական սպասներ գնած է «չնչին գումարով» ու կ'ենթադրէ որ Երուսաղէմի Ս. Աթոռի սեփականութիւնը եղած են: Պրն. Սուքիաս կը փափաքէր եկեղեցական սպասները Առաջնորդարանիս նուիրել:

Նոյն օրը Պրն. Սուքիասը Առաջնորդարան հրափրեցինք, որ եւ իր հետ բերաւ սպասները՝ Ս. Պատարագի ընթացքին գործածուող ՓԱՐՁ «ջորի սափոր» մը եւ ԿՈՆԶ «լուսցման աման» մը: Պրն. Սուքիասի տուած տեղեկութեանց համաձայն, սպասները Աստրալիոյ Պրիզապլը քաղաքէն եկած ու աճուրդի դրուած են. սպասները գնուած են անհատէ մը:

Փարքի յիշատակարանն է.-

ՅԻՇԷ ՄԱՀՏԵՍԻ ԱՐԹԻՆԻ ՈՐԴԻ ԽՕՃԱՅ ՅԱԿՈԲԻ ՂԵՎՈՆԹԻ ՍՈՒՔԻԱՍԻ.  
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՀԱՅՈՑ ՆՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՊՈՂՈՍ  
ՎԱՐԴԱՊԵՏԻՆ.  
ՈՄԲ «1753»:

Կոնքի յիշատակարանն է.-

ՅԻՇԱՏԱԿ Է ԹՕԽԱԹՅԻ ԶԵՐՓԻՉՈՂԼԻ ԳՐԻԳՈՐԻ.  
ԷՐՈՒՍԱՂԷՄ Ի ԴՈՒՈՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ ԱՌՈՒՈՒՆ. ՉԵՈՒԱՄԲ ԹՕԽԱԹՅԻ  
ՍԻՄԵՕՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ. ԹՈՒՈՒՆ ՈՄԻԲ «1793»

Վերոյիշեալ մանրամասնութեանց եւ արձանագրութեանց ծանօթանալէ ետք, յստակ դարձաւ որ եկեղեցական սպասները Երուսաղէմի Ս. Աթոռի սեփականութիւնն են, որ զարտուող ճանապարհով հասած են մինչեւ Աստրալիա:

Պրն. Սուքիասի բացատրեցինք որ սիրով կ'ընդունինք սպասները, սակայն առեւի ճիշդ պիտի ըլլայ զանոնք վերադարձնել օրինական եւ հաղագատ տիրոջ՝ Երուսաղէմի Պատրիարքութեան. Պրն. Սուքիասի համաձայնութիւնը ունենալէ ետք, Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի հետ կ'ապ հաստատեցինք ու տեղեկի պահեցինք եղելութենէն. Պատրիարքն ալ իր կարգին փափաք յայտնեց որ Երուսաղէմ վերադառնան վանքի սեփականութիւնը հանդիսացող եկեղեցական սպասները: Պրն. Սուքիասի խոր շնորհակալութիւն յայտնեցինք իր ուշադիր վերաբերմունքին ու նուիրատուութեան համար:

Թանկագին նուիրատուներ, հանգիստ ննջեցէք, քանզի ձեր սրտաբովս նուիրը, անյայտ ու անորոշ թափառումներէ ետք, կարելի փութով տուն դարձի ճամբան պիտի բռնէ:

Միփոքորուած ենք որ գէշ երկու եկեղեցական սպասներ, որոնք սրտաբովս նուիրներ են ու արտայայտիչը հայու հաւատքին, փրկուած են...: Տակալին քանի քանի եկեղեցական սպասներ ու իրեր կան, որոնք հայու հաւատքին խոր արտայայտիչն են եւ օտարութեան մէջ կը թափառին: Որ մնացին մեր կրօնական եւ ազգային սրբութիւններն ու նուիրականութիւնները:

Անշուրդ մեկնաբանութիւն չենք ուզեր ընել. բայց մեր մտահոգութիւնը եւ ընդվզումը կը յայտնենք քսելով թէ, երբ, ինչպէս եւ որոնց պիտի ձեռքբերով այս եկեղեցական սպասները Երուսաղէմի Հայոց Վանքէն դուրս բերուած են «չնչին գումարի» փոխարէն:

*Աղաս Արքեպս. Պաղիօզեան*  
Աղաս Արքեպս. Պաղիօզեան  
Առաջնորդ Աստրալիոյ եւ Ն.Զ.-ի